ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մայիսի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

«ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0621 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ՝

ա) «ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ներկայացված գրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվել է, որ 2021 թվականի մարտի 17-ին տեղի է ունեցել «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվանման և գտնվելու վայրի փոփոխություն, իսկ Ընկերությունը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 90-րդ կետին համապատասխան ԼԷ №0621 լիցենզիայի վերաձևակերպման հայտ չի ներկայացրել Հանձնաժողով,

բ) Կարգի 90-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում, լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 10-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 90-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի մայիսի 17-ի գրությամբ հայտնել է, որ ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ հետագայում նման խախտումները բացառելու նպատակով, և խնդրել Ընկերության անվանման և գտնվելու վայրի փոփոխության հիմքով վերաձևակերպել Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 23-ի №169Ա որոշմամբ տրամադրված «Ջերմուկհիդրո» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0621 լիցենզիան,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 90-րդ կետի պահանջը, մասնավորապես, 2021 թվականի մարտի 17-ին տեղի է ունեցել «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի անվանման և գտնվելու վայրի փոփոխություն, մինչդեռ Ընկերությունը ԼԷ №0621 լիցենզիայի վերաձևակերպման հայտը ներկայացրել է Կարգի 90-րդ կետով սահմանված տասնհինգօրյա ժամկետից ուշ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 30-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ կետերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և Կարգը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 23-ի «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ջերմուկհիդրո» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №169Ա որոշմամբ «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0621 լիցենզիան վերաձևակերպել «ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ, և լիցենզիայի պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, 3 մկրշ, շ. 16, բն. 58»:

2. Կարգի 90-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մայիսի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մայիսի 2021թ.